

Փախստականների հարցերով զբաղվող մարմին, Բեռլին (LAF)	<b>Ներքին կանոնակարգ</b> Բեռլին երկրամասի փախստականների կացարանների և հանրակացարանների համար	Էջ 1 / 12
		Թարմացվել է՝ 07.12.2020թ.

**Բարի գալուստ Բեռլին երկրամասի փախստականների և ապաստան փնտրողների կացարան:**

Սույն ներքին կանոնակարգը ներառում է կացարանում համատեղ կյանքի կազմակերպման կանոնները, որոնք հավասարապես գործում են այնտեղ բնակվող կամ աշխատող բոլոր մարդկանց, այդ թվում՝ այցելուների համար: Նպատակն է՝ ապահովել հարգալից և առանց բռնության համակեցություն:

Գերմանիայում բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ: Դա նաև նշանակում է, որ չի թույլատրվում ոչ ոքի նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերել կամ նրան առավելություն տալ նրա սեռի, ծագման, լեզվի, հայրենիքի, հավատքի, կրոնական կամ քաղաքական հայացքների, սեռական կողմնորոշման, տարիքի կամ ռասիստական հիմքերով: Ռասիստական հիմքեր առկա են նաև այն դեպքում, երբ մարդկանց վիրավորանք է հասցվում զուտ նրանց արտաքին առանձնահատկությունների, օրինակ, մաշկի գույնի պատճառով: Իրավունք չկա խտրական վերաբերմունք ցուցաբերել որևէ մեկի նկատմամբ նրա հաշմանդամության պատճառով:

Գերմանիայում պետության կողմից երաշխավորված հիմնական իրավունքներից է հատկապես կանանց և տղամարդկանց օրենքով սահմանված հավասարության իրավունքը: Դա նշանակում է, որ կանայք և տղամարդիկ կյանքի բոլոր բնագավառներում հավասար իրավունքներ և պարտականություններ ունեն: Իրավունք չկա խտրական վերաբերմունք ցուցաբերել որևէ մեկին կին կամ տղամարդ լինելու պատճառով:

Նույն կամ երկու սեռի նկատմամբ սեռական ձգողություն ունեցող մարդկանց (գեյեր, լեսբուհիներ, երկսեռականներ), ինչպես նաև մարդկանց, որոնք իրենց ոչ մի սեռի չեն վերագրում, կամ որոնց մոտ կենսաբանական սեռը տարբերվում է իրենց զգացած սեռից (ինտերսեքսուալներ կամ տրանսսեքսուալներ), գերմանական պետությունը երաշխավորում է հավասար իրավունքներ, ինչպես բոլոր այլ մարդկանց, և ոչ ոք իրավունք չունի նրանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ սեռային ինքնության պատճառով որևէ կերպ խտրականություն կիրառել: Այս խմբերին պատկանող բնակիչներին պետք է վերաբերվել հարգանքով, և կացարանում ոչ ոք իրավունք չունի թշնամական վերաբերմունք ցուցաբերել նրանց կամ որևէ կերպ խտրականություն կիրառել նրանց նկատմամբ:

Կացարանի ադմինիստրատորները պարտավոր են հետևել, որ կացարանում երկարատև կամ ժամանակավոր բնակվող բոլոր մարդիկ պահպանեն այս կանոնակարգը:

**§ 1 Կացարանային իրավունքը**

1. Կացարանային իրավունքով որոշվում է, թե ովքեր իրավունք ունեն մտնել կացարան և կացարանի տարածք ու բնակվել այնտեղ, և ինչպես պետք է կացարանի տարածքում իրենց պահեն բնակիչները, ադմինիստրատորի ու անվտանգության ծառայության աշխատակիցները, այցելուները, կամավոր օգնողները և համագործակցող գործընկերները:

<b>Փախստականների հարցերով զբաղվող մարմին, Բեռլին (LAF)</b>	<b>Ներքին կանոնակարգ</b> <b>Բեռլին երկրամասի փախստականների կացարանների և հանրակացարանների համար</b>	Էջ 2 / 12
		Թարմացվել է՝ 07.12.2020թ.

Բեռլին երկրամասի հանձնարարությամբ ադմինիստրատորը կիրառում է կացարանային իրավունքը և հետևում է կացարանի ներքին կանոնակարգի պահպանմանը: Այդ գործում նրան օգնում է անվտանգության ծառայությունը:

2. Բնակվողների անձնական տարածքի անձեռնմխելիության հարցերը կարգավորում են բնակվողները միմյանց միջև, դրան հետևում են նաև ադմինիստրատորի և անվտանգության աշխատակիցները:

Ադմինիստրատորը իր կողմից կատարվող վերանորոգումների և պարբերական զննումների այցերի մասին նախապես ծանուցում և դրանք համաձայնեցնում է բնակվողների հետ: Անհրաժեշտությունից ելնելով այցերը կարելի է կատարել բնակվողներին նախապես տեղեկացնելուց հետո, նրանց համաձայնությամբ և երբ նրանք կացարանում են, ինչպես նաև՝ պահպանելով նրանց անձնական տարածքը:

Սենյակներ մտնելուց առաջ պետք է թակել դուռը և սպասել ներս հրավիրելուն:

Ադմինիստրատորին և անվտանգության աշխատակիցներին, ինչպես նաև իրավասու կանոնակարգիչ մարմիններին չի թույլատրվում մտնել բնակվողի սենյակ առանց նրա թույլտվության, բացի այն դեպքերից, երբ վտանգ է սպառնում: Վտանգ սպառնում է մասնավորապես այն դեպքում, երբ մարդկանց կամ գույքին կարող է վնաս հասցվել: Ինչպես բնակարանների դեպքում, փախստականների կացարանների և հանրակացարանների սենյակների համար նույնպես գործում է Մահմանադրության 13-րդ հոդվածով նախատեսվող տարածության իմաստով անձնական տարածքի պաշտպանության իրավունքը: Այդ պաշտպանությունը կարող է սահմանափակվել միայն օրինական հիմքով: Նման օրինական հիմքը սահմանվում է Օտարերկրյա քաղաքացիների կացության, աշխատանքային գործունեության և ինտեգրման մասին օրենքում: Ընդ որում, խուզարկությունները հնարավոր են միայն դատական որոշման առկայության դեպքում:

Բնակվողի բացակայության ժամանակ սենյակ մտնելուց հետո պետք է սենյակում և կացարանի ղեկավարության մոտ գրավոր հիմնավորում թողնել:

3. Չի թույլատրվում զբաղվել արհեստագործությամբ, ցանկացած տեսակի առևտրով, ինչպես նաև կատարել գովազդ տնտեսական գործունեության համար:

4. Պայուսակների և պահարանների ստուգումն իրավունք ունի անցկացնել միայն ոստիկանությունը՝ դրա համար որևէ օրինական հիմքի առկայության դեպքում:

**§ 2 Կանոնակարգի գործողությունը**

Սույն ներքին կանոնակարգի գործողությունը տարածվում է կացարանի ողջ տարածքի վրա:

Այն պարտադիր է բոլոր բնակվողների, կամավոր օգնողների, համագործակցող գործընկերների, ինչպես նաև ադմինիստրատորի և անվտանգության ծառայության աշխատակիցների համար:

**§ 3 Բնակվողները**

<b>Փախստականների հարցերով զբաղվող մարմին, Բեռլին (LAF)</b>	<b>Ներքին կանոնակարգ</b> <b>Բեռլին երկրամասի փախստականների կացարանների և հանրակացարանների համար</b>	Էջ 3 / 12
		Թարմացվել է՝ 07.12.2020թ.

1. Այս կացարանում բնակվողների օրինական կացության համար նախապայման է հանդիսանում ծախսերի ստանձնման վավեր հայտարարությունը կամ Փախստականների հարցերով զբաղվող երկրամասային մարմնի (գերմ. Landesamtes für Flüchtlingsangelegenheiten, LAF) ուղեգիրը:
2. Ժամանակավոր բնակությունը հիմք չի հանդիսանում երկարատև բնակության իրավունքի համար:
3. Յուրաքանչյուր բնակվողի տրվում է բնակության վկայական, որը բնակվողները պետք է ներկայացնեն ադմինիստրատորի և (կամ) անվտանգության անձնակազմի պահանջով և միշտ իրենց մոտ ունենան:
4. Կացարանում համատեղ կյանքի կազմակերպման հարցում բնակվողների ակտիվ մասնակցությունը խիստ ցանկալի է, ինչին պետք է աջակցի կացարանի ադմինիստրատորը կամ ղեկավարությունը համապատասխան միջոցառումների առաջարկներով, ինչպիսիք են բնակվողների խորհրդի կազմումը կամ համագործակցության այլ ձևերը:
5. Բոլոր բնակվողները պարտավոր են խնայողաբար օգտագործել հոսանքը, ջուրը և ջեռուցումը:
6. Արտաքին ալեհավաքների տեղադրումը հնարավոր է միայն ադմինիստրատորի հետ նախապես համաձայնեցնելուց հետո և Բեռլին երկրամասում գործող օրենքների ու հրահանգների պահանջներն ապահովելու դեպքում:
7. Կացարանում բնակվողների համար կան նաև ընդհանուր օգտագործման սենյակներ, որոնց օգտագործումը վերապահված է որոշակի անձանց խմբերին: Օգտագործման ժամերը կարգավորում է ադմինիստրատորը: Ընդհանուր օգտագործման տարածքները կարելի է օգտագործել տարբեր նշանակությամբ, օրինակ, հանդիպումների, սպորտային մարզանքների, համատեղ հեռուստացույց դիտելու կամ կրթական միջոցառումների համար: Մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ կացարանի անձնակազմից:
8. Մեկ օրից երկար ժամանակավոր բացակայության (հիվանդանոցային բուժում, այցեր երկրամասից դուրս գտնվող պետական մարմիններ կամ այլ կարևոր պատճառներ) կամ կացարանից դուրս գալու մասին հնարավորինս շուտ պետք է տեղեկացնել կացարանի ղեկավարությանը: Եթե հնարավոր է բացակայությունը պլանավորել վաղօրոք, այդ մասին հնարավորինս շուտ պետք է հայտնել կացարանի ղեկավարությանը: Մեփական մեղքով չտեղեկացնելու դեպքում հավանական է, որ կորցնեք ներկայիս բնակատեղին բացակայության երրորդ օրվանից հետո:
9. Նրանց համար, որոնք բնակվում են ոչ փախստականների համար նախատեսված կացարանում, գործում է հետևյալը.

Երեք օրից երկար պլանավորված բացակայության դեպքում կարելի է պահպանել կացարանում հատկացված տեղը, եթե բացակայությունը պարտադիր է կարևոր պատճառներից ելնելով (օր. բուժում հիվանդանոցում, հանդիպում երկրամասից դուրս

<b>Փախստականների հարցերով զբաղվող մարմին, Բեռլին (LAF)</b>	<b>Ներքին կանոնակարգ</b> <b>Բեռլին երկրամասի փախստականների կացարանների և հանրակացարանների համար</b>	Էջ 4 / 12 Թարմացվել է՝ 07.12.2020թ.
--	--	---

գտնվող պետական մարմնի հետ, թույլատրված աշխատանքային գործունեություն երկրամասից դուրս, մասնակցություն ընտանեկան հատուկ միջոցառումներին, ինչպիսիք են հարսանիքները, հուղարկավորությունները և այլն): Այս դեպքում նախապայման է հանդիսանում սոցիալական ծառայությունները տրամադրող պետական մարմնի (փախստականների հարցերով զբաղվող երկրամասային մարմին, զբաղվածության կենտրոն, շրջանային վարչություն) թույլտվությունը:

LAF-ից այս ծառայություններն ստացող բնակվողների համար բացակայությունը նշված պատճառներով կարող է թույլատրվել որպես կանոն մինչև 20 օր մեկ օրացուցային տարվա ընթացքում՝ առանց կացարանում տեղը կորցնելու և մեկ այլ կացարան տեղափոխվելու անհրաժեշտության, եթե այլ իրավական հիմքեր չկան: Բացառություն կազմող հատուկ դեպքերում (օրինակ՝ ավելի երկար հիվանդանոցային ստացիոնար բուժումը) կարող է բացակայելու թույլտվություն տրվել նաև 20-ից ավել օրվա համար:

Բացակայության համար պետք է նախապես դիմում ներկայացնել LAF-ին:

Եթե չգիտեք, թե որ մարմնին պետք է ներկայացնեք թույլատրված բացակայության դիմումը, Ձեզ կօգնի կացարանի անձնակազմը:

10. Ծայրահեղ իրավիճակներում (օրինակ՝ սուր հիվանդություն, վտանգի սպառնալիք կամ բռնության գործադրում) բնակվողները մշտապես կարող են դիմել ադմինիստրատորի կամ անվտանգության ծառայության կոնտակտային անձին: Նա կարող է նաև փրկարարական ծառայություն կանչել: Կացարանի անձնակազմը կհոգա նաև հատկապես ծանր միջադեպերում հայտնված և դրանց ազդեցությունը հաղթահարող բնակվողներին սատարելու մասին: Այլ հարցերով ու ցանկություններով կարելի է աշխատանքային ժամերին դիմել ադմինիստրատորին կամ փախստականների հարցերով զբաղվող երկրամասային մարմնի բողոքների կառավարման բաժնին (էլ.փոստ՝ [unterkunft-qs-beschwerde@laf.berlin.de](mailto:unterkunft-qs-beschwerde@laf.berlin.de)):

**§ 4 Այլ անձինք**

1. Բնակվողներն իրենց սենյակներում կարող են հյուրեր ընդունել: Հյուրերի այցելությունների, մասնավորապես՝ այցերի ժամերի կարգավորման հետ կապված մանրամասներով զբաղվում է կացարանի ղեկավարությունը՝ ըստ ներքին կանոնակարգի և LAF-ի հետ համաձայնեցված կարգով: Կացարանի ղեկավարությունը պատշաճ կարգով կտեղեկացնի բնակվողներին հյուրերի այցելությունների վերաբերյալ կացարանում գործող կանոններին: Այս տեղեկատվությունը պարունակում է ցուցում նաև այն մասին, թե արդյոք այցելությունները թույլատրելի են միայն գիշերային հանգստի ժամերից դուրս, թե այցելուները որոշակի պայմանների պահպանմամբ կարող են նաև գիշերել կացարանում:

2. Բնակվողների այցելուները, ինչպես նաև կամավոր օգնողները և համագործակցող գործընկերները պետք է ներկայացնեն լուսանկարով փաստաթուղթ (անձնագիր, վկայական, բժշկական ապահովագրության քարտ, դպրոցականի վկայական կամ այլ փաստաթղթեր) և տարածքներ մտնելուց առաջ և հեռանալիս գրանցվեն ընդունարանում: Նրանց կտրվի այցելուի վկայական: Ադմինիստրատորին և անվտանգության

Փախստականների հարցերով զբաղվող մարմին, Բեռլին (LAF)	<b>Ներքին կանոնակարգ</b> Բեռլին երկրամասի փախստականների կացարանների և հանրակացարանների համար	Էջ 5 / 12
		Թարմացվել է՝ 07.12.2020թ.

ծառայությանը չի թույլատրվում հավաքել և մշակել այցելուների, կամավոր օգնողների և համագործակցող գործընկերների անձնական տվյալները:

3. Առանց թույլտվության օբյեկտում մնացող անձինք խախտում են շենքի անձեռնմխելիությունը և պետք է հաշվի առնեն, որ կարող են իրավախախտման ծանուցագիր ստանալ: Օգնողների և այցելուների ժամերը կփակցվեն առանձին, որոնց պետք է հետևել:

**§ 5 Մաքրությունը և կարգուկանոնը**

1. Կացարանի փողոցներում և արտաքին բակերում ալկոհոլի և թմրանյութերի օգտագործումն արգելվում է:

2. Շենքի ողջ տարածքում ծխելն արգելված է. արգելքը գործում է նաև նարգիլների և էլեկտրոնային ծխախոտների համար: Բնակվողները կարող են օգտվել միայն դրսում ծխելու համար նախատեսված տարածքներից: Բնակվողները պետք է ինքնուրույն հոգան այդ տարածքների մաքրության մասին:

3. Իրենց սենյակների և դրանց պատուհանների մաքրության համար պատասխանատու են իրենք՝ բնակվողները: Շենքային տարածքներում բավարար օդափոխություն պետք է ապահովել նաև տարվա ցուրտ եղանակներին (խորհուրդ է տրվում կատարել միջանցիկ օդափոխություն, այլ ոչ տևական օդափոխություն կիսաբաց լուսամուտով):

4. Շենքը, քնելու և ճաշելու տարածքները, ինչպես նաև ընդհանուր օգտագործվող տարածքներն ու սենյակները (օրինակ՝ ընդհանուր խոհանոցները և ընդհանուր սանհանգույցները) լքելիս պետք է մշտապես ապահովել դրանց մաքրությունը: Բնակվողն իր պատճառով առաջացած աղտոտվածությունը պետք է անմիջապես և ինքնուրույն մաքրի: Խաղաղասպարակներից դուրս գալիս պետք է ապահովել դրանց մաքրությունը:

5. Կացարանի ղեկավարության հետ համաձայնեցնելով՝ բնակվողներն իրենց սենյակներում կարող են կահավորման սեփական իրեր ավելացնել: Դա չի վերաբերում այն դեպքերին, երբ տվյալ իրի ավելացմամբ խախտվում են իրավական պահանջներ, բնակելի տարածքն զգալիորեն փոքրանում է, կամ այն խանգարում է մյուս բնակվողներին: Ամեն դեպքում ավելացվող կահավորման իրերի համար պատասխանատու է բնակվողը: Դա մասնավորապես վերաբերում է նաև կացարանից հեռանալիս այդ իրերի տեղափոխմանը:

6. Բնակվողներն իրավունք չունեն սեփական գորգերն ամրացնել հատակին: Բնակվողները շաբաթական մեկ անգամ պետք է փոշեկուլով մաքրեն գորգերը, հավաքեն դրանք և խոնավ կտորով սրբեն հատակը: Տարեկան մեկ անգամ գորգերը պետք է լվանալ օձառաջրով (համաձայն Վարակիչ հիվանդություններից պաշտպանության օրենքի §36-ի՝ Հիգիենայի պահպանման տիպային ծրագիր):

7. Եթե մահճակալները քնելու համար չեն օգտագործվում, ապա ներքնակները չի թույլատրվում երկարատև թողնել հատակին, ցերեկվա ընթացքում դրանք պետք է տեղադրել մահճակալներին՝ բավարար օդափոխություն ապահովելու, ինչպես նաև

<b>Փախստականների հարցերով զբաղվող մարմին, Բեռլին (LAF)</b>	<b>Ներքին կանոնակարգ</b> <b>Բեռլին երկրամասի փախստականների կացարանների և հանրակացարանների համար</b>	Էջ 6 / 12
		Թարմացվել է՝ 07.12.2020թ.

արտակարգ իրավիճակում սենյակն արագ ազատելու և փախուստի ելքերը չփակելու համար: Հատակի ջեռուցմամբ սենյակներում չի թույլատրվում ներքնակները տեղադրել հատակին:

8. Սանհանգույցների խցանումից խուսափելու համար չի թույլատրվում աղբ, ուտելիքի մնացորդներ կամ նման բաներ լցնել կոյուղու մեջ: Չուզարանակոնքերի և լվացարանների մեջ չի թույլատրվում թափել խոհանոցային աղբ, թղթե տակդիրներ, հիգիենիկ միջադիրներ և նման բաներ: Դրանք պետք է թափել դրանց համար հատուկ նախատեսված աղբի տարաների մեջ:

9. Կացարանի իրերին պետք է վերաբերվել խնամքով: Բոլոր բնակվողները պարտավոր են ինքնուրույն խուսափել կահավորմանը, ինչպես նաև շենքին վնաս հասցնելուց: Վնասների մասին պետք է անհապաղ հայտնել ադմինիստրատորի անձնակազմին: Մեխեր, կախիչներ, պտուտակներ կամ նման բաներ ինքնուրույն ամրացնելն արգելվում է: Սակայն պատի ամրակումների համար կարելի է դիմել կացարանի ղեկավարությանը: Համաձայնության դեպքում դրանք կամրացնի շենքի տնտեսվարը:

10. Վարակիչ հիվանդությունների պաշտպանության մասին օրենքի § 36-ի՝ Հիգիենայի պահպանման տիպային ծրագրի համաձայն աղբը պետք է տեսակավորել, հավաքել տոպրակներում կամ կափարիչով տարաներում և ամեն օր հեռացնել:

11. Բոլոր բնակվողները կացարան տեղափոխվելիս ստանում են անկողնային սպիտակեղեն, սրբիչներ և սպասք: Սրբիչները պետք է լվանալ ամեն շաբաթ, իսկ անկողնային սպիտակեղենը՝ առնվազն երեք շաբաթը մեկ նվազագույնը 60 աստիճանում (Վարակիչ հիվանդություններից պաշտպանության մասին օրենքի § 36՝ Հիգիենայի պահպանման տիպային ծրագիր):

12. Բնակվողներն իրենց սպիտակեղենը լվանում են ինքնուրույն:

ա) Սպիտակեղենի լվացման համար տեղադրված են լվացքի մեքենաներ, որոնց օգտագործումն անվճար է: Դրանք պետք է օգտագործել խնամքով՝ շահագործման ուղեցույցին համապատասխան և միայն լվացքի մեքենաների համար նախատեսված լվացքի միջոցներով:

բ) Սպիտակեղենի չորացման համար տեղադրված են անվճար չորանոցներ: Դրանք պետք է օգտագործել խնամքով՝ շահագործման ուղեցույցին համապատասխան: Բորբոսի առաջացումից խուսափելու համար սպիտակեղենը չի թույլատրվում չորացնել բնակելի սենյակների ներսում: Չորացնել թույլատրվում է բաց պատշգամբներում, եթե դրանք ունեն լվացքի չորանոցներ:

գ) Ընդհանուր լվացման կայաններից օգտվել սեփական պատասխանատվությամբ:

դ) Ադմինիստրատորը կամ Բեռլինի երկրամասը պատասխանատվություն չեն կրում վնասների կամ գողության համար:

ե) Հարցերի դեպքում դիմել ադմինիստրատորի անձնակազմին:

Փախստականների հարցերով զբաղվող մարմին, Բեռլին (LAF)	<b>Ներքին կանոնակարգ</b> Բեռլին երկրամասի փախստականների կացարանների և հանրակացարանների համար	Էջ 7 / 12
		Թարմացվել է՝ 07.12.2020թ.

13. Տնային կենդանիներ պահել չի թույլատրվում:

14. Վնասատու կենդանիներ (օր.՝ փայտոջիլներ, ոջիլներ, առնետներ) տարածվելու դեպքում պետք է այդ մասին անմիջապես հայտնել կացարանը տնօրինողի անձնակազմին:

**§ 6 Պաշտպանություն աղմուկից**

1. Ընդհանուր առմամբ պետք է խուսափել աղմկելուց: Բնակվողները պետք է հաշվի առնեն հարևաններին և իրենց սենյակակիցներին: Երաժշտությունը թույլատրվում է լսել այն բարձրությամբ, որ սենյակից դուրս չլսվի:

2. Հանգստի ժամն է՝ երեկոյան ժամը 22:00-ից մինչև առավոտյան 6:00-ը: Այդ ժամանակահատվածում չի թույլատրվում աղմկոտ աշխատանքներ կամ գործողություններ կատարել: Սենյակից դուրս չլսվող գործողությունները թույլատրվում են: Կիրակի և տոն օրերին հիմնականում չպետք է իրականացնել աղմկոտ գործողություններ և աշխատանքներ: Չայնային վերարտադրմամբ սարքեր և երաժշտական գործիքներ կարելի է օգտագործել ցանկացած ժամանակ, եթե դրանց ձայնը սենյակից դուրս չի լսվում:

3. Բաց պատուհաններով, ինչպես նաև բացօթյա տարածքներում զրուցել և բջջային հեռախոսով խոսել այնպես, որ դա չափազանց մեծ աղմուկ չստեղծի հարևան շենքերի բնակիչների համար և չխանգարի նրանց:

4. Նորմալ մանկական աղմուկն ընդունելի է: Բոլորի համար պետք է ընդունելի լինի երեխաների խաղալու բնական կարիքը: Սակայն ծնողները պետք է հոգան այն մասին, որ երեխաները նույնպես հաշվի առնեն մյուսներին (այլ բնակվողներին, հարևաններին):

**§ 7 Մանկասայլակների, հեծանիվների, հենակների ու քայլակների և այլ առարկաների տեղակայումը**

1. Աստիճանավանդակում և միջանցքներում արգելվում է տեղակայել մանկասայլակներ, հեծանիվներ, հենակներ ու քայլակներ և այլ առարկաներ: Փախուստի և տարհանման բոլոր ելքերը պետք է ազատ լինեն թե՛ ցերեկը, թե՛ գիշերը:

2. Հեծանիվները, մանկասայլակները և օգնող սարքերը կարելի է կանգնեցնել միայն այդ նպատակի համար նախատեսված տարածքներում:

3. Կանգնեցրած հեծանիվների, օգնող սարքերի և այլնի ապահովության համար պատասխանատու է յուրաքանչյուր բնակվող: Սրանց համար աղմինիստրատորը կամ Բեռլին երկրամասը որևէ պատասխանատվություն չեն ստանձնում:

Փախստականների հարցերով զբաղվող մարմին, Բեռլին (LAF)	<b>Ներքին կանոնակարգ</b> Բեռլին երկրամասի փախստականների կացարանների և հանրակացարանների համար	Էջ 8 / 12
		Թարմացվել է՝ 07.12.2020թ.

**§ 8 Անվտանգություն**

1. Բոլոր բնակվողները պարտավոր են ադմինիստրատորից ստանալ հրդեհի դեպքում անհրաժեշտ պահվածքի հրահանգները և մասնակցել կացարանում կազմակերպվող հակահրդեհային վարժանքներին:
2. Հրդեհի դեպքում պետք է ենթարկվել փրկարար ծառայության ուժերի և հրշեջների ցուցումներին, ինչպես նաև՝ «Ինչ անել հրդեհի դեպքում» ցուցատախտակի ցուցումներին: Բացօթյա տարածքներում հավաքատեղի կա: Փախուստի և տարհանման ելքերը թե՛ ցերեկային, թե՛ գիշերային ժամերին պետք է բաց լինեն, և դրանց դիմաց չպետք է լինեն ծանրաբեռնող իրեր:
3. Ծխի տվիչը և ծխի դետեկտորը, կրակմարիչը, հրդեհի տվիչը և ազդանշանային համակարգերը հեռացնելը լուրջ վտանգ է ներկայացնում բոլոր բնակվողների համար և արգելված է:
4. Ջեռուցման և եփման սեփական սարքերը չի թույլատրվում շահագործել բնակելի տարածքներում: Մենյակներում այլ էլեկտրական սարքեր կարելի է օգտագործել միայն ադմինիստրատորի հետ համաձայնեցնելուց հետո: Այլապես էլեկտրական սարքերի օգտագործումը կարող է արգելվել: Շարժական բաշխիչ վարդակների կամ երկարացման լարերի օգտագործումն արգելված է: Արգելվում է նաև ցանկացած տեսակի բաց կրակի օգտագործումը:
5. Արտաքին պատուհանագոգերին չի թույլատրվում առարկաներ տեղադրել, քանի որ դրանք կարող են ընկնել ու վնասել մարդկանց:
6. Շենքի, նկուղների և բակերի բոլոր դռները ժամը 22:00-ից հետո պետք է փակ պահել: Միշտ փակ պահել նկուղի և աստիճանավանդակի պատուհանները, եթե կացարանի ղեկավարությունը այլ կանոն չի մտցրել, մասնավորապես՝ հակավարակիչ միջոցառումների նպատակներով:
7. Միջանցքի և աստիճանավանդակի լուսավորությունը խափանվելու դեպքում այդ մասին պետք է անհապաղ հայտնել ադմինիստրատորին, քանի որ անսարք լուսավորությունը կարող է դժբախտ պատահարների պատճառ դառնալ:
8. Աստիճանավանդակում խաղալը, անվտանգության նկատառումներով, արգելվում է: Երեխաներին թույլատրվում է խաղալ խաղի համար նախատեսված տարածքներում (խաղասենյակներ և խաղահրապարակներ, բացօթյա տարածքներ):
9. Ծնողները պարտավոր են հսկել իրենց երեխաներին: Երեխաների կողմից կարգի պահպանման համար պատասխանատու են ծնողները:
10. **«Ինչ անել շտապ օգնության անհրաժեշտության դեպքում» (Հավելված I), «Ինչ անել հրդեհի դեպքում» (Հավելված II), «Ահազանգման սխեմա» (Հավելված III), «Փախուստի և տարհանման սխեմա» (Հավելված IV)** լրացված տեղեկատվական թերթիկները կազմում են ներքին կանոնակարգի բաղկացուցիչ մասը, որոնք ուշադիր պետք է ընթերցի



<b>Փախստականների հարցերով զբաղվող մարմին, Բեռլին (LAF)</b>	<b>Ներքին կանոնակարգ</b> <b>Բեռլին երկրամասի փախստականների կացարանների և հանրակացարանների համար</b>	Էջ 9 / 12
		Թարմացվել է՝ 07.12.2020թ.

յուրաքանչյուր բնակվող, իսկ ոչ գրաճանաչ մարդկանց համար բարձրաձայն պետք է ընթերցի և մեկնաբանի ադմինիստրատորը:

**§ 9 Պատասխանատվություն**

1. Բնակվողները և այցելուները իրենք են պատասխանատու իրենց պատճառած վնասների համար և պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով: Նշված կարգը սահմանված է Գերմանիայում գործող Քաղաքացիական օրենսգրքում (BGB):
2. Եթե բնակվողների սեփականությանը վնաս են հասցնում ադմինիստրատորի կամ անվտանգության ծառայության աշխատակիցները, նրանք պատասխանատու են դրա համար և պատասխանատվություն են կրում օրենքի համաձայն (BGB):
3. Կացարանի բանալիների կամ ռադիոկապի սարքի կրկնակի կորստի դեպքում դրանից բխող ծախսերը կարող են ներկայացվել բնակվողին:

**§ 10 Կոնտակտային անձինք**

Բնակվողներն իրենց հարցերով, մտահոգություններով, ցանկություններով կամ բողոքներով ցանկացած ժամանակ կարող են դիմել ստորև նշված կոնտակտային անձերին և սպասարկող մարմիններին.

- Կացարանում բնակվելու վերաբերյալ հարցերը, ցանկությունները և բողոքները կարելի է ուղղել կացարանի ղեկավարությանը կամ նրա կողմից նշված կոնտակտային անձերին:
- Կացարանում բնակության պայմաններին վերաբերող բողոքները նույնպես կարելի է ներկայացնել կացարանի ղեկավարությանը: Բացի այդ, բողոքները, այդ թվում՝ անանուն, կարելի է ներկայացնել Փախստականների հարցերով զբաղվող երկրամասային մարմնին, ինչպես նաև Բեռլինում Բողոքների քննման անկախ գրասենյակին՝ վերջինիս գործունեությունն սկսելու դեպքում:
- Փախստականների հարցերի շրջանային համակարգողները տեղեկացնում են նաև փախստականների համար նախատեսվող շրջանային պաշտպանիչ միջոցառումների մասին:
- Փախստականների ընդունումը և նրանց ներառումը կազմակերպելիս Ներառման և միգրացիայի հարցերով սենատի հանձնակատարը տրամադրում է լայնածավալ տեղեկատվություն և խորհրդատվություն, մասնավորապես՝ կացության իրավունքի, ընտանիքի վերամիավորման, ապաստանի տրամադրման ընթացակարգի, սոցիալական ծառայությունների, ապրելու տեղի որոնման, աշխատանքային գործունեության, դպրոցի և այլ ասպեկտների վերաբերյալ:
- Հասարակական հիմունքներով իրականացվող նախաձեռնություններում ընդգրկված քաղաքացիներն աջակցում են փախստականներին՝ օգնելով առօրյայի

Փախստականների հարցերով զբաղվող մարմին, Բեռլին (LAF)	<b>Ներքին կանոնակարգ</b> Բեռլին երկրամասի փախստականների կացարանների և հանրակացարանների համար	Էջ 10 / 12
		Թարմացվել է՝ 07.12.2020թ.

խնդիրների հաղթահարման, թղթաբանական գործողությունների, աշխատատեղի և բնակարանի որոնման և այլ հարցերում:

Համապատասխան կոնտակտային տվյալներն ադմինիստրատորի կողմից ցուցադրվում են կացարանում՝ բոլոր բնակվողների համար տեսանելի վայրում:

**§ 11 Ներքին կանոնակարգի խախտումները և հանցագործությունները**

1. Այս կանոնակարգը խախտելու դեպքում շենք մուտք գործելը կարող է արգելվել, ինչպես նաև դա կարող է հանգեցնել կացարանում տեղի կորստին: Շենք մուտք գործելու արգելքները պետք է լինեն գրավոր և հիմնավորված: Շենք մուտք գործելու արգելքի մասին գրավոր հրամանը առձեռն հանձնվում է այն անձին, որի վրա տարածվում է այդ արգելքը:

2. Շենք մուտք գործելու արգելքը պետք է սահմանել Փախստականների հարցերով զբաղվող երկրամասային մարմնի ընթացակարգի համաձայն: Ընդհանուր առմամբ, շենք մուտք գործելու արգելքն իրավունք ունի սահմանել միայն կացարանի ղեկավարությունը: Բացառություն կազմող դեպքերում (սպառնալիք բնակվողների կամ աշխատակիցների համար), ինչպես նաև հատկապես սույնի 3-րդ կետում նշված խախտումների դեպքում շենք մուտք գործելու արգելք սահմանելու իրավունք ունի նաև անվտանգության ծառայության հերթափոխի ղեկավարը, եթե կացարանի ղեկավարությունը տեղում չէ, կամ հնարավոր չէ նրանց արագ կանչել:

Նախքան շենք մուտք գործելու արգելք սահմանելը պետք է հիմնականում երկու գրավոր նախազգուշացում անել: Միայն երրորդ նախազգուշացման ժամանակ է շենք մուտք գործելու արգելքը սահմանվում: Շենք մուտք գործելու արգելքը գործում է առավելագույնը երեք ամսով և միայն տվյալ կացարանի համար: Շենք մուտք գործելու արգելքը չի գործում ողջ ընտանիքի համար:

3. Այս ներքին կանոնակարգի առանձնակի լուրջ խախտումների դեպքում կարող է շենք մուտք գործելու անհապաղ արգելք սահմանվել: Շենք մուտք գործելու անհապաղ արգելք է սահմանվում մասնավորապես այլ անձանց հարձակումներից պաշտպանելու նպատակով և թույլատրելի է հետևյալ խստիվ արգելված արարքների կամ հանցավոր գործողությունների առկայության դեպքերում.

- Ցանկացած տեսակի սպառնալիք (նաև բառերով)
- Ուժի ցանկացած ձևով կիրառում (մասնավորապես կանանց, երեխաների, կրոնական փոքրամասնություններին պատկանող և պաշտպանության կարիք ունեցող այլ անձանց նկատմամբ) կամ նաև ուժ կիրառելու սպառնալիք
- Ձենք պահելու մասին օրենքով արգելված զենքերի և զենքանման իրերի տնօրինում կամ այդ զենքերի առևտուր (մասնավորապես բոլոր տեսակի հրազենային, ինչպես նաև կտրող և ծակող որոշակի զենքերը): Եթե կա կասկած, որ տվյալ իրը համարվում է արգելված զենք, այդ մասին տեղեկացվում է մոտակա ոստիկանական բաժանմունքը: Մոտակա ոստիկանական բաժանմունքի գտնվելու վայրի մասին կարելի է հարցնել կացարանի ղեկավարությանը:
- Անօրինական թմրանյութերի առևտուր շենքում և արտաքին տարածքներում

<b>Փախստականների հարցերով զբաղվող մարմին, Բեռլին (LAF)</b>	<b>Ներքին կանոնակարգ</b> <b>Բեռլին երկրամասի փախստականների կացարանների և հանրակացարանների համար</b>	Էջ 11 / 12
		Թարմացվել է՝ 07.12.2020թ.

- Հոգեբանական ճնշման ցանկացած ձև, այսինքն՝ առանձին մարդկանց որևէ առանձին անձի կամ խմբի կողմից անընդհատ և պարբերաբար հիմնականում հոգեբանական ծաղրի, տանջանքի ենթարկելը և հոգեպես վնասելը
- Ոստիկանության կողմից հետապնդվող քրեական հանցագործությունները: Ոստիկանության կողմից հետաքննչական գործողությունների իրականացման ընթացքում շենք մուտք գործելու անհապաղ արգելքը թույլատրվում է սահմանել միայն այն դեպքում, եթե դա պահանջվում է կացարանի բնակիչներին կամ անձնակազմին հնարավոր վտանգից պաշտպանելու համար
- Ծանր հանցագործություններ (օր.՝ սեռական բռնություն, վտանգավոր մարմնական վնասվածք, հրդեհում) կացարանում
- Կրկնվող հետապնդում, երբ առկա է կրկնման վտանգ, կամ տուժած անձի համատեղ բնակեցումը արարքի ծանրության պատճառով հնարավոր չէ:

Շենք մուտք գործելու անհապաղ արգելք սահմանելուց բացի, որի արդյունքում տվյալ անձն անմիջապես կորցնում է կացարանը, ներքին կանոնակարգի այն խախտումները, որոնք կապված են զենքեր կամ անօրինական թմրանյութեր ունենալու, ինչպես նաև այդ օբյեկտների/իրերի առևտրով զբաղվելու, նաև կացարանում կատարվող ծանր հանցագործությունների և բնակվողների կամ աշխատակիցների նկատմամբ ուժ կիրառելու հետ, կտեղեկացվեն ոստիկանությանը, և հանցագործի կամ հանցագործների դեմ քրեական գործ կհարուցվի:

4. Բնակվողները, որոնց վրա շենք մուտք գործելու արգելք է տարածվում, կարող են դիմել կացարանի անձնակազմին, որպեսզի պարզեն, թե ինչ մարմնի պետք է դիմեն նոր կացարանում բնակվելու տեղ ստանալու համար:

5. Նրանք, ում նկատմամբ շենք մուտք գործելու արգելք է կիրառվել, կարող են արգելքի վերաբերյալ բողոք ներկայացնել LAF-ին կամ Բեռլինում Բողոքների ներկայացման անկախ գրասենյակին (BuBs): Բողոքն ստանալիս LAF-ը կստուգի՝ արդյոք շենք մուտք գործելու արգելքն արդարացի և օրինական կերպով է սահմանվել, թե այն պետք է հանվի:

**§ 12 Կացարանի հանձնումը**

1. Եթե ադմինիստրատորը կամ Փախստականների հարցերով զբաղվող մարմինը չեն սահմանել կացարանը հանձնելու օրը, տվյալ բնակվողը հնարավորինս շուտ՝ առնվազն երկու շաբաթ առաջ, այդ մասին պետք է հայտնի կացարանի ղեկավարությանը:

2. Կացարանը հանձնելիս պետք է անմիջապես հետ վերադարձնել տան բանալին և բնակվողի վկայականը:

3. Կացարանը հանձնելիս կացարանին պատկանող բոլոր իրերը պետք է հետ հանձնվեն լիարժեք վիճակում:

4. Կացարանը հանձնելիս բնակվողները պարտավոր են իրենց հետ վերցնել իրենց կողմից կամ հանձնարարությամբ կացարան բերված բոլոր իրերը, եթե դրանք 3-րդ կետում սահմանված իրերի թվին չեն պատկանում: Իրերը թողնելու դեպքում կենթադրվի, որ

<b>Փախստականների հարցերով զբաղվող մարմին, Բեռլին (LAF)</b>	<b>Ներքին կանոնակարգ</b> <b>Բեռլին երկրամասի փախստականների կացարանների և հանրակացարանների համար</b>	Էջ 12 / 12 Թարմացվել է՝ 07.12.2020թ.
--	--	--

դրանք կարելի է թափել: Իրերի հեռացումը կարող է կատարվել բնակավոդների ծախսերով: Բնակավոդի թողած փաստաթղթերը և արժեքավոր իրերը, կպահվեն ադմինիստրատորի մոտ, եթե դրանց սեփականատերն անհասանելի լինի: Գտնված իրերի վերաբերյալ օրենքով սահմանված պահանջները (Դաշնային օրենսդրության §§ 965ff. ) կմնան անփոփոխ: Դա նշանակում է, որ թողած փաստաթղթերը և արժեքավոր իրերը կպահվեն վեց ամիս, և ադմինիստրատորը կփորձի գտնել դրանց սեփականատերերին ու հայտնել նրանց այդ իրերի մասին: Եթե հնարավոր չլինի իրերն այդ ժամկետի ընթացքում հանձնել սեփականատերերին, ադմինիստրատորը կարող է ինքը տնօրինել այդ գտնված իրերը: